ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագիրս ելնոյ ամեն երեք հանգամանս յայտարարելոյ դրամագլուխն պիտի է լինի ամեն 4 տարի հանար 1 նոսի։

Հրատարակեսցի ամեն օր, բացի Տարեվերջ։ Տարեկան բաժանորդագրութիւնն է 6 ռուբլի։

ՀԱՏՈՒԱԾ ՄԻՈՅ

Զ. ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9. 1863 ԱՄԻ №39.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեղու Հայաստանի, քաղաքական, ազգային և բանասիրական լրագիրը 1864ին էլ կը հրատարակվի նոյն ուղղութեամբ և ընթացքով, ինչպէս ներկայ տարւոյս մէջ, միայն այն զանազանութեամբ, որ եթէ ստորագրողաց թիւը բաւական լինի, ուրեմն և միջոցները կը ներեն, կ'մեծացնէ իր թերթը։ Այս անս պարտք ենք համարում ասել, որ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնվի առաջիկայ տարին քաղաքական և ազգային մասների վերայ։

Բաժանորդագրութեան գինն մնալու է, թէ Թիֆլիզի մէջ և թէ արտաքոյ սորա վեց ռուբլի արծաթ։

Ստորագրվել ցանկացողները կարող են դառնալ իրան խմբագրին կամ Պ. Համբարձում Էնֆիաճեանցի մաղազիան և կամ Պ. Իսահակ Տէր Միքայէլեանցի և ընկ. գրավաճառանոցը, որոնք գեներալ Արծրունու Գալերէումն են, Թիֆլիզի մէջ։ Իսկ դրսի քաղաքներից կամ գեղերից ցանկացողները կարող են ուղղակի դիմել գրութեամբ իրան խմբագրին կամ հրատարակչին և կամ մեր արժանայարգ գործակալներին, որոնց յայտնելով մեր շնորհակալութիւնը ներկայ տարւոյս մէջ քաշած նեղութեանց համար, կ'խնդրենք առաջիկայ տարին էլ յանձն առնուլ կատարելու նոյն դժուարակիր պաշտօնը։

Փոստայի և Թիֆլիզի մէջ տուն հասցնելու ծախսերն էլ խմբագրատան վերայ է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Daily News» Լեհաստանի հարցի վերայ։

Մի Ֆրանսիայի շաբաթական լրագիր, որոնք շատ ընդունակ քաղաքագէտ անձանց իրան գործակից ունի, հաստատումէ, որ մեր (Անգղիայի) կառավարութիւնը արդէն նշանաւոր քայլ է արել։ Կոմս Ռոսսէլը, պատասխանելով յիշեալ լրագիրը, ուղարկել է սեպտ. 28-ին (10-ին հոկտ.) Ս. Պետերբուրգ ծանուցագիր, որոնք յայտնումէ, թէ «Անգղիայի կառավարութեան հայեցուածքին նայելով 1815-ի դաշնադրութեան այն պայմանքը, որոնց հիման վերայ Ռուսաստանը Լեհաստանին տիրելու իրաւունք ունէր, պէտք է համարել ջնջած։ Այս հաստատութեան ստոյգ լինելուն մենք

այն ժամանակն էլ չէինք հաւատ ընծայել. եթէ որ մի կիսապաշտօնական Ֆրանսիացի լրագիր, ըստ սովորութեան, չէր ջրել այս լուրը: Մենք շատ ուրախ կ'լինէինք, եթէ որ Անգղիայի կառավարութիւնը անէր առանձին անկախ զեկուցումն այս առարկայի մասին: Այսպիսի գործը աւելի կշիռ կ'ունենար, իբրև մի անկողմնասէր ազգի բարոյական վճիռ, քանի՝ իբրև մի քաղաքական թուղթ. եթէ միայն ամէն ազգ էլ իր կողմից առանձնապէս միևնոյնը անէր: Բայց յայտնի է, որ մեր կառավարութիւնը մեծ նշանակութիւնը է տալիս երեք տէրութեանց դաշնակցութեանը, և չէ կամենում նրանից բաժանվել: Մինչև ցայժմ միւս տէրութիւնները չկարողացան միաբանել և միանալով Անգղիայի հետ ընդհանուր զեկուցումն անել այս առարկայի մասին: Մեր կառավարութեան միտքը թէև համառօտաբար, բայց պարզապէս արտայայտեց կոմս Ռոսսէլը: Նա կարծում է, որ Լեհաստանի վերաբերութեամբ Ռուսաստանը չէ կատարել իր պարտաւորութիւնը Եւրոպայի առաջին և այնպէս զրկել է իրան այն իրաւունքներից, որոնք նա Վիեննայի դաշնագրութիւնը ստորագրող միւս տէրութեանց համաձայնութեամբը վայելում էր, նա պատրաստ է այս իր համոզմունքը արտայայտելու իր միւս դաշնակիցների հետ միասին և տալու դաշնագրութեան այն կշիռը, որնոր կ'վայելէ ազգերի մէջ եղած մի արձանագրութեան: Միայն մինչև ցայժմ նա դեռ ևս չէ արել այս քայլը: Այն ևս պէտք է աչքի առաջին ունենալ, որ մի այսպիսի զեկուցումի նշանակութիւնը և կշիռը բոլորովին այնպիսի կ'լինի, ինչպէս նկարագրում են նրան Ֆրանսիայի լրագիրները: Միևնոյնը չէ յայտնել, թէ Ռուսաստանը, չկատարելով դաշնագրութեան պայմանները, զրկվում է իր իրաւունքներից, կամ ասել, թէ այն դաշնագրութիւնը այլ ևս զօրութիւն չունէ:

Պ. Ֆորկադ մի Ֆրանսիացի օրագրի մէջ արդարութեամբ անում է նկատողութիւն այս մասին, ասելով. «Մասնաւոր մարդոց մէջ եղած պայմաններում էլ, եթէ մի կողմը չէ կատարում իր պարտաւորութիւնները, նա չէ կարող ընդհանուր օգտի այն մասն պահանջել, որի վերայ նա իրաւունք կարող էր ունենալ. միայն ինչպէս քաշող կողմն, թէ ցոյց էլ տայ նորա այդ իրաւունքից զրկվելը, այնու ամենայնիւ էլի չէ ազատում նրան իր պարտաւորութիւններից — նա կամենում է միշտ իր ժամանակին և իր ձևով օգուտ քաղել այն իրաւունքներից, որոնք նրան տալիս է պայմանագիրը, որնոր երբէք այնքան զօրութիւն չունէ, որքան այն ժամանակ, երբ ցոյց են տալիս նորա գէմ եղած վարմունքը այն մարդուն, ով որ չէ կատարել նրան: Միևնոյնը է ազգերի մէջ եղած պայմանագրութիւններում, և մենք խղճմտանքի համաձայն կատարելով Վիեննայի դաշնագրութիւնը չենք կորցնում ոչ մէկը մեր իրաւունքներից, որոնք նա մեզ տալիս է, միայն այն պատճառով, որ Ռուսաստանը սխալեց մեզ յայտնելու, որ նա կորցնում է իր իրաւունքները: Մենք առանձին ազգային օգուտ չունենք Վիեննայի դաշնագրութիւնը պահպանելումը, միայն մեր ընդհանուր շահը այն է, որ անխափան կատարվին ազգերի մէջ եղած փոխադարձ պարտաւորութիւնները»:

— Երեք տէրութեանց դրութիւնը Լեհաստանի խնդրի մասին.

Գերմանական «Allgemeine Zeitung» լրագրին գրում են Վիեննայից հոկտեմբերի 4-ին. «Նախարարների խորհուրդը, որնոր մի քանի ժամ քաշեց, կայսեր իրան նախագահութեամբ, պարապում էր քննելով Աւստրիայի այժմեան քաղաքական դրութիւնը և մանաւանդ Լեհաց խնդրի այժմեան փոխակերպութիւնը: Բայց ասում են, թէ ոչ մի վախճանական վճիռ չէ կայացել: Միայն համոզվել են, որ անհնարին է Աւստրիային բացարձակ չեզոքութիւն պահպանել: Նա պէտք է ընտրութիւն անէ Պրուսսա — Ռուսական և արևմտեան տէրութեանց դաշնակցութիւնների մէջ: Ռուսաստանին մօտենալը կ'նշանակէր դէպի յետ քայլ անել իր ներքին քաղաքականութեան մէջ և Պրուսսիայի հետ միանալու ստիպվել Գերմանիայի դաշնակցութեան յեղափոխութեան մէջ: Այս իրողութեան անյարմարութիւնը աշխարայ է. կամայ թէ ակամայ պէտք է Աւստրիան մատնակցի Ֆրանսիայի և Անգղիայի դաշնակցութեանը: Միայն Աւստրիայի համար ամէնից աւելի նշանաւոր է գիտել, թէ մինչև ո՞ր աստիճան կ'հասնէ այս սերտ դաշնագրութիւնը. և նա արդեօք աւելի առաջ չէ գնալ, քան որքան կարելի է այժմ դուշակել: Անգղիայի հակումն և սէրը, իբրև Աւստրիայի հին դաշնակցի, Վիեննայի արքունիքին ամէնից աւելի հարկաւորներն են: Այժմ, ինչպէս երևում է, Անգղիան կամենում է օգնել Ֆրանսիայի գործողութիւններին, Լեհաստանը ազատելու համար, և գուցէ մասնակից ևս լինի նրանցը: Միայն Անգղիան կարող է այս անել առանց ինքն վտանգի մէջ ընկնելու. բայց Աւստրիայի դրութիւնը այնպէս չէ: Մինչև անգամ եթէ արևմտեան տէրութեանց որևիցէ կասկածաւոր ընթացքը բարոյապէս միայն պահպանելու լինի Աւստրիան, վաղ թէ ուշ այս պատճառով պէտք է ծագի Ռուսաստանի և նորա մէջ անշուշտ տարաձայնութիւն, ուստի և այժմեան վճիռը շատ ծանրակշիռ է Վիեննայի արքունիքի համար: Սա կարող է անել միայն այնպիսի առաջարկութիւններ, որոնք կ'ընդունէր Ռուսաստանը և որոնք խաղաղութիւն առաջ բերել կարող էին: Բայց առհասարակ նա պէտք է մի վճռամը, և մենք խղճմտանքի համաձայն կատարելով Վիեննայի դաշնագրութիւնը չենք կորցնում ոչ մէկը մեր իրաւունքներից, որոնք նա մեզ տալիս է, միայն այն պատճառով, որ Ռուսաստանը սխալեց մեզ յայտնելու, որ նա կորցնում է իր իրաւունքները: Մենք առանձին ազգային օգուտ չունենք Վիեննայի դաշնագրութիւնը պահպանելումը, միայն մեր ընդհանուր շահը այն է, որ անխափան կատարվին ազգերի մէջ եղած փոխադարձ պարտաւորութիւնները»:

— Երեք տէրութեանց դրութիւնը Լեհաստանի խնդրի մասին.

Գերմանական «Allgemeine Zeitung» լրագրին գրում են Վիեննայից հոկտեմբերի 4-ին. «Նախարարների խորհուրդը, որնոր մի քանի ժամ քաշեց, կայսեր իրան նախագահութեամբ, պարապում էր քննելով Աւստրիայի այժմեան քաղաքական դրութիւնը և մանաւանդ Լեհաց խնդրի այժմեան փոխակերպութիւնը: Բայց ասում են, թէ ոչ մի վախճանական վճիռ չէ կայացել: Միայն համոզվել են, որ անհնարին է Աւստրիային բացարձակ չեզոքութիւն պահպանել: Նա պէտք է ընտրութիւն անէ Պրուսսա — Ռուսական և արևմտեան տէրութեանց դաշնակցութիւնների մէջ: Ռուսաստանին մօտենալը կ'նշանակէր դէպի յետ քայլ անել իր ներքին քաղաքականութեան մէջ և Պրուսսիայի հետ միանալու ստիպվել Գերմանիայի դաշնակցութեան յեղափոխութեան մէջ: Այս իրողութեան անյարմարութիւնը աշխարայ է. կամայ թէ ակամայ պէտք է Աւստրիան մատնակցի Ֆրանսիայի և Անգղիայի դաշնակցութեանը: Միայն Աւստրիայի համար ամէնից աւելի նշանաւոր է գիտել, թէ մինչև ո՞ր աստիճան կ'հասնէ այս սերտ դաշնագրութիւնը. և նա արդեօք աւելի առաջ չէ գնալ, քան որքան կարելի է այժմ դուշակել: Անգղիայի հակումն և սէրը, իբրև Աւստրիայի հին դաշնակցի, Վիեննայի արքունիքին ամէնից աւելի հարկաւորներն են: Այժմ, ինչպէս երևում է, Անգղիան կամենում է օգնել Ֆրանսիայի գործողութիւններին, Լեհաստանը ազատելու համար, և գուցէ մասնակից ևս լինի նրանցը: Միայն Անգղիան կարող է այս անել առանց ինքն վտանգի մէջ ընկնելու. բայց Աւստրիայի դրութիւնը այնպէս չէ: Մինչև անգամ եթէ արևմտեան տէրութեանց որևիցէ կասկածաւոր ընթացքը բարոյապէս միայն պահպանելու լինի Աւստրիան, վաղ թէ ուշ այս պատճառով պէտք է ծագի Ռուսաստանի և նորա մէջ անշուշտ տարաձայնութիւն, ուստի և այժմեան վճիռը շատ ծանրակշիռ է Վիեննայի արքունիքի համար: Սա կարող է անել միայն այնպիսի առաջարկութիւններ, որոնք կ'ընդունէր Ռուսաստանը և որոնք խաղաղութիւն առաջ բերել կարող էին: Բայց առհասարակ նա պէտք է մի վճռա-

կան և հաստատ ընթացք բռնէ և ոչ թէ տատանի զանազան տեսութեանց մէջ: Ֆրանսիայի հետ եղած բոլոր բանակցութիւններից երևում է, որ այս տէրութիւնը ցանկանում է վճռական և որոշ գործողութիւններ, ուստի և տհաճութեամբ նայում է Աւստրիայի տատանման վերայ և մի սեռակ կասկած է կրում Անգլիայի վերայ էլ: Միայն մի հանգամանք օգնում է Փարիզի արքունիքի վստահութեանը, նա հաւատի է, որ Անգլիայի մէջ այժմ հասարակաց կարծիքը աւելի պատերազմի կուսակցութեան կողմն է: Միայն այն ևս պէտք է ասենք, որ պատիւ է բերում Ֆրանսիային, որ, իր գաղտնի բանակցութեանց մէջ Աւստրիայի հետ, տալիս էր սրան ընդարձակ երաշխաւորութիւններ, այն ինչ ինքն առանձին յետ էր կանգնում իր սահմանները ընդարձակելու դիտաւորութիւնից: Այսպէս Լեհաստանի խնդիրը դառնում մի ընդարձակ և համաշխարհական խնդիր և Աւստրիան այս բոպէին պէտք է վճռէ, թէ թողնէ արդեօք Արևելքի տիրապետութիւնը բոլորովին Ռուսաստանին, թէ առաջը առնէ այժմ իսկ կամ թէ չէ թողնէ այս գործքը ապագայ սերնդին: Այս հարցին վերաբերեալ բոլոր միւս հանգամանքները, որպիսի անուն էլ որ կրելու լինին նոքա, բոլոր թէ նոյնանշան ծանուցագիր կամ թէ մինչև անգամ վերջին պայման—բոլորն էլ երկրորդական բաներ են:

«Courrier du Dimanche» Լեհաստանի խնդրի դեսպանական ընթացքի վերայ. Courrier du Dimanche լրագիրը հաղորդում է. «Լորդ Ռոսսէլի պաշտօնական ծանուցագիրը, որնոր բովանդակում է իր մէջ Ռուսաստանի իրա իրաւունքը կորցնելը Լեհաստանի վերայ 1815-ի դաշնադրութիւնները չկատարելուն պատճառով, խրկվեցաւ յիրաւի Ս. Պետերբուրգ Լորդ Նեպիրին: Հաւաստի է այն ևս, որ Ֆրանսիայի արքունիքը, երբ պաշտօնական կերպով ստացաւ տեղեկութիւն այս մասին, վճռեց ծանուցանել Լոնդոնի, Վիեննայի և Ս. Պետերբուրգի արքունիքներին, թէ ինքը համաձայն է կոմս Ռոսսէլի դիտաւորութեանց հետ, միայն չէ համաձայն, որ կազմվի նոյնանշան ծանուցագիր, որով հարկ լինէր հրապարակապէս յայտնել Ռուսաստանի իր իրաւունքները կորցնելը: Մենք կարծում ենք, որ Պ. Դրուէն դէ Լիւի, մի քաղաքական անձնի հետ խօսելիս, չծածկեց նրանից այս հանգամանքը. նա, հաղորդելով այս համաձայնութեան մասին պարոն Գրոյին, դուքս Գրամոնին և դուքս Մոնտեբելլոյին, աշխատ եղաւ ցոյց տալ և հասկացնել, որ այս առաջարկութեան սկզբնաւորութիւնը Ֆրանսիային չէ պատկանում: Այս շատ հասկանալի է, որովհետև որքան Ֆրանսիայի արքունիքը ցանկանում էր, որ աւելի զօրեղ միջոց 'ի գործ դրվի, այնքան պէտք է զգոյշ լինէր նա այս յայտարարութեան մասին, որնոր բացի տեսական նշանակութիւնը ոչինչ չէր բովանդակում իր մէջ: Ահա իրերի այն վիճակը, որնոր Լոնդոնի թղթակցութիւններից ծագում է:

«Այսօր մենք իմացանք, որ կոմս Ռոսսէլի ծանուցագիրը չէ յանձնված իշխան Գորչակովին, որովհետև նոր եկած հեռագրական հաղորդակցութիւնը արգելել է այն: Արդեօք այս հանգամանքի պատճառը Վիեննայից եկած լուրերը չէ՞ն: Հաւանական է, որ կոմս Ռեխբերգը արած լինի զանազան առարկութիւններ, որոնք պէտք է աղդեցութիւն ունեցած լինին Լոնդոնի արքունիքի վախճանական վճռի վերայ»: Բացի սրանից մեր տեղեկութիւնքը թոյլ են տալիս մեզ կարծելու, որ փոփոխութեան գլխաւոր պատճառը Լորդ Պալմերստոնի հակառակութիւնն եղաւ: Ցայտնի է, որ սա 'ի սկզբանէ իր հաճութիւնը չէր ցոյց տալիս իր ընկերոջ ընթացքին և պարսաւում էր նրան: Վերջապէս Լորդ Պալմերստոնի կարծիքը յաղթեց, յայտնի բան է, բաւական ուշ. միայն էլի ոչ տարաժամ յիշեալ ծանուցագրի առաջը առնելու համար:

«La France" դեսպանագիտական բանակցութեանց վերայ Լեհաստանի գործքի մասին.

Մենք հաղորդեցինք, որ Լոնդոնի արքունիքը ուղղեց Լորդ Նեպիրին ծանուցագիրը, որնոր պէտք է յանձնվեր իշխան Գորչակովին և որնոր կրում էր կերպարանք մի դեսպանական վիճաբանութեան 1815 դաշնադրութեան մասին: Բոլոր սրանից յետ ստացած տեղեկութիւնները հաստատում են այս նշանաւոր իրողութեան ստուգութիւնը: Միայն հաւանական է և այն, որ Լորդ Նեպիրը յետոյ ստացաւ հեռագրական հաղորդակցութիւն, որնոր հրամայում էր նրան պահել այն Անգլիական ծանուցագիրը և չհաղորդել այն իշխան Գորչակովին: Այժմ հաստատապէս յայտնի է, որ այս հրամանի պատճառը էր Վիեննայի արքունիքի տատանումն: Անգլիայի արքունիքը կատարելապէս համոզված էր, որ Աւստրիան բոլորովին համաձայն է նորա ընթացքին, միայն երբ նա իմացաւ, որ Վիեննայումն ծաղել է նոր կասկած 1815-ի դաշնադրութեան վերայ երեք տերութեանց կողմից եղած վախճանական վճռի մասին, ստիպվեցաւ կանգնացնել իր քայլը, որ մի դուցէ մենակ մնայ հանդէսում, ուրիշներից զատված: Մեզ գրում են Վիեննայից, որ սորա արքունիքի ընթացքը շատ անհանդստացնում է ամէնքին: Ցնայելով Աւստրիայի քաղաքականութեան ընթացքին Լեհաստանի վերաբերութեամբ, նորա զարթեցրած հարցմունքները, թէ պէտք է ունենայ երաշխաւորութիւններ իր համար, որովհետև ինքն ստիպված է առանձնապէս յարաբերութիւններ ունենալու Ռուսաստանի

հետ, ունին միշտ իրանց կշեռք և նշանակութիւնը: Եթէ նա մտերմութեամբ և վճռողաբար կ'միանայ արևմտեան ազգութեանց հետ, աւելի հեշտ կ'լինի նրան լուծել ամէն հարցերը. քան եթէ կ'բաժանվի նրանցից և իր բոլոր յոյսը իր զօրութեան վերայ կ'դնէ, որովհետև նա աչքի առաջ պէտք է ունենայ իր ներքին և արտաքին հանգամանքների դժուարութիւնները: Վիեննատումն շատ անհանգիստ են լինում իրանց կառավարութեան այս դանդաղ քաղաքականութեան վերայ, որնոր այժմ էլ, ինչպէս և Խրիմու պատերազմի ժամանակ, ջնջում է Աւստրիայի ազդեցութիւնը իրերի ընթացքի վերայ, որով գցում է նրան շատ վատանդների մէջ. զրկելով այն ամէն շահերից, որոնք նա կարող էր քաղել, եթէ հետևել էր աւելի գործունեայ և անտարտամ քաղաքականութեան: Աւստրիական արքունիքի հարկից ծագած տարտամութիւնը շատ ազդեցութիւն ունի Անգղիայի վճռի վերայ:

ԱԶԳԱՅԻՆ

Մենք պատիւ ունեցանք մեր Մեղուի միջոցով միանգամ հրատարակել մեր Վեհափառ Հայրապետի աշխատասիրած գրեանց ցուցակը, որոնք թուով տասներկու էին, զանազան նիւթերի վերայ: Այժմ մտերմութիւս լոյս տեսաւ Նորին Վեհափառութեան մի նոր արժանաւոր գործը, այն է, «Սխալմունք դասատարին Մեկնութեան խորհրդոյ և արարողութեանց սրբոյ պատարագին, տպելոյ 'ի Թէոդոսիա, 'ի տպարանի Խալիպեան ուսումնարանի:

Վեհափառի այս աշխատութիւնը տպված է Ս. Էջմիածին և բովանդակում է իր մէջ ցուցումն այն սխալների, որոնք գտնվում են յիշեալ Թէոդոսիա տըպված դասատարի մէջ և որոնք, ինչպէս երևում է սրբազան Կաթուղիկոսի առաջ բերած փաստերից, շատ հակառակ են առաքելոց և մեր եկեղեցւոյ սուրբ հարց վարդապետութիւններին և մեկնութեանց: Այս դասատարի հեղինակը կարծեօք պէտք է դերապատիւ Հայր Գաբրիել Այվազովսկի վարդապետը լինի, որնոր աշխատասիրած էր այն տարակը դասատուութեան համար ուսումնարանների մէջ:

Շատ ցաւալի է, որ մեր Եպիսկոպոսներից կամ վարդապետներից ոչոք յանձն չէ առել այնպիսի մի նոր կրօնական գիրքը քննութեան տակ դցելու ու մեր Վեհափառ Կաթուղիկոսը, որնոր առանց նորա էլ ծանրաբեռնած է իր կառավարական պարապմունքներով ըստ ամենայնի գտնվել ամէն բանի մէջ միայն ինքն իրին արթուն հովիւ հանդէս դուրս գալու:

—Մի ազգի բարոյական և մտաւոր զարգացման վիճակը արտայայտող հանգամանքներից մէկն էլ է նորա մէջ հրատարակվող պարբերական հրատարակութեանց թիւն և ուղղութիւնը: Որքան մի ազգ կամ հասարակութիւն լուսաւորեալ և յառաջադէմ է, այնքան էլ շատ են լինում նորա պարբերական հրատարակութիւնները: Այս միևնոյն երևոյթը երևում է և մեր ազգի մէջ. կար ժամանակ, այն էլ շատ հեռու չէ մեզնից, որ բոլորովին մեր ազգի մէջ լրագիր կամ օրագիր տասնը չլիտէին, թէ ինչ են, չնայելով որ նոյն ժամանակները ուրիշ ազգերի մէջ հարիւրաւոր և հազարաւոր հրատարակութիւններ լինում էին. իսկ այժմ ամենեին սորա հակառակն ենք տեսնում. տեսնում ենք, որ այս վերջին տարիները ահա բաւական բազմաթիւ հրատարակութիւններ լոյս են տեսնում, վերընկնում, էլի նորերը ծագում, որ և ցոյց է տալիս մեր ազգի մէջ լուսաւորութեան ճանչակի նոր զարթնելը:

Ահա մեր տասնեներին մի նոր ապացոյց են այս տարուան մէջ սկսած երկու նոր Հայ լրագիրների սկիզբը:

Սրանցից առաջինը է Հիւսիս անունով քաղաքական և բանասիրական լրագիրը, որնոր հրատարակվում է Ս. Պետերբուրգում Պ. Ռ. Պատկանեանցի խմբագրութեամբ. գինն է 10 մանէթ տարին: Ստորագրվելցանկացողները կարող են ուղղակի դիմել իրան խմբագրին կամ Պ. Կուսիկեանցին Թիֆլիզի մէջ, Շիրյեվի տանը, Պրօսպեկտի վերայ, ուր և ստորագրվողները կ'ստանան և յիշեալ լրագրի համարներն էլ որոնց երկուսը տասցված են արդէն:

—Երկրորդ նոր լրագիրը «Երկրագունդ» անուն շաբաթական հրատարակութիւնն է, որնոր լոյս է տեսնում հայր Կարապետ Շահնազարեանց վարդապետի խմբագրութեամբը Անգղիայի Մանչեստր քաղաքում: Այս լրագիրը է քաղաքական, գիտնական, գրական, կրօնական և տաւեարական: Սորա բաժանորդութեան գինն է տարին 25 շիլլինգ Անգղիական (7 մանէթ 50 կոպ.): Ստորագրվել ցանկացողները կարող են դառնալ Պ. Իսահակ տէր Միքայէլեանցի և ընկերութեան գրատունը:

Ցանկացողները կարող են դառնալ և Մեղուի խմբագրատունն էլ, որնոր սիրով և ուրախութեամբ կ'ընդունէ յիշեալ օրագիրների բաժանորդութիւնը և կ'հասցնէ նոցա խմբագիրներին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ.

(Շարունակութիւն եւ վերջ.)

«Գ. Տիսէք ուրիշ բարեկամներ, թէ որքան Ջանք և ուշադրութիւն պէտք է ունենանք մեր սեպհական

գործքերի վրայ։ բայց այս բոլոր բաների հետ հարկաւոր է, որ մեր շահածը իմանանք պահպանել։ եթէ կամենում ենք մեր աշխատասիրութեան պտուղները առատապէս վայելել։ Ով որ չէ իմանում իր դիզած հարստութիւնը պահպանել, ու իր կարողութեանը համեմատ կեանք վարել նա կարող է իր բոլոր կեանքը ջաղացքի քարի շուրջ կողմը անցկացնելուց յետոյ, հացի կարօտ մնալ ու անօթի մեռնել։ Շատ կալուածներ փչացան այն ժամանակներից, երբ կանայք, չայի սիրուն, սկսեցին մոռանալ ամէն կահ կարասիքը կապել ու կողպէքի տակ դնել, և մարդիկ, փունջի սիրուն, հոգս քաշել ու աշխատել։ Եթէ ուզում ես հարուստ լինել, որքան դիզել ես իմանում այնքան էլ պահպանել իմացիր։ Հնդկաստանը Սպանիային չհարստացրեց, որովհետև, այն երկրի ծախքը եկամուտից շատ է։

«Ուրեմն դէն թողնենք այս մեր յիմարութիւնները, և այնքան պատճառ չենք ունենար գանգատելու այժմեան դժուար ժամանակների, ծանր տուրքերի և մեր ընտանիքների մեծութեան վրայ։ «Կին արմատն ու գինին, խաղը ու խաբեբայութիւնը հարստութիւնը պակասացնում և աղքատութիւնը աւելացնում են», ասում է խելՁուկ Ռիքարտը, յետոյ այս էլ աւելացնում է թէ՝ «ինչ փող որ փչացնում ենք մէկ մոլի ախտի բաւականութեան համար, այն փողը բաւական կը լիներ երկու երեխայի կրթութեան համար»։ Դուք բարեկամներ, կարելի է մտածէք, թէ մի քիչ չայ, փոքր ինչ գինի, այն էլ երբեմն, փոքր ինչ առատ սեղան ունենալ, փոքր ինչ ազնիւ շոր հագնել և փոքրիկ հացկերութիւններ անել երբեմն—այդ մեծ բան չէ։ բայց միտներդ բերէք, թէ «քիչը քիչի վրայ դիզուելով գառնում է շատ»։ Զգուշանանք փոքր ծախքերից։ «փոքր ջուրը մեծ նաւեր է ընկղմում», ինչպէս ասում է խելՁուկ Ռիքարտը, նոյնպէս թէ «ով որ հեշտասէր է, նա շուտով կ՚աղքատանայ, և դարձեալ թէ «ախմախները ճաշ են տալի, իսկ յիմարները ուտում են»։

Ա.հաւատիկ դուք ամենքդ այս տեղ ժողովեցաք այլ և այլ զարդարանքներ ու անպէտք բաներ դնելու, որոնք յոյս ունիք աժան գնով ձեռք բերել, շատ կարելի է, որ ձեր յոյսը պարապ չլինի։ շատ կարելի է որ ձեր առնելիքները իրանց արժողութիւնից պակաս գնով ծախուին։ բայց եթէ ձեզ ամենևին հարկաւոր բաներ չեն, ինչ գնով էլ որ ստանաք նրանց, թանդ է։ Միտներդ բերէք ինչ է ասում խելՁուկ Ռիքարտը։ «եթէ ուրիշից անպէտք բաներ ես գնում, շուտով կը ստիպուիս քո հարկաւոր բաներն էլ ծախելու»։ և դարձեալ թէ։ «խիստ աժան բան էլ որ գտնես, մի՛ շտապիր առնելու»։ Գրանով նա ուզում է ասել թէ կարելի է որ քեզ միայն այնպէս երևում է, թէ այդ առած բանդ աժան է։ բայց իրօք շատ թանդ է, կամ թէ անդադար այդպիսի անպէտք բաներ առնելով՝ փողդ կը պակսի, որով և գործերդ հետ կը մնան ու մեծ վնասներ կը քաշես։ Ուրիշ տեղ նա ուղղակի ասում է։ «շատ մարդիկ քանդուելոյն միայն էնդուր համար, որ աժան աժան բաներ են գնել»։ դարձեալ թէ «անմտութիւն է փող մսխել այնպիսի բաներ առնելու, որոնց համար յետոյ պէտք է փշրմանենք»։

Շատ մարդիկ, միայն իրանք իրանց տեսակ տեսակ թանկագին շորերով զարդարելու համար, քաղցած փորով ման են գալի և իրանց ընտանիքը անօթի պահում են։ «մետաքսն ու ատլասը, ծիրանին ու թաւիշը խոհանոցի կրակը հանգցնում են», ասում է խելՁուկ Ռիքարտը։ Այս բոլոր թանկագին բաները ոչ միայն անհրաժեշտ, այլ թէ կամիս, հարկաւոր էլ չեն մարդուս կեանքի համար, և սակայն քանի՞ քանի՞ մարդիկ ցանկանում են թանկոց շորեր ունենալ, միայն էնդուր համար որ աչքի երևացող ու գեղեցիկ բաներ են։ Այս և սրանց նման ուրիշ յիմարութիւններով հարուստ մարդիկ աղքատանում են, և ստիպւում են փոխ առնել այնպիսի անձինքներից, որոնց երբեմն արհամարհում էին, և որոնք իրանց աշխատութիւնով և շահած հարստութիւնը պահպանելով՝ ապահովացրել են իրանց ապագան։

Ա.յն մարդը որ ձրի ժառանգութիւն է ստանում, քիչ օգուտ կարող է քաղել նրանից։ որովհետև իրան աշխատածը չլինելով՝ կարծում է, թէ «այժմ ցերեկ է, և դիշեր լինելու չէ երբէք»։ թէ այնքան հարստութիւնից փոքր ինչ փչացնելը մեծ բան չէ։ բայց «եթէ ալիւրի արկղից անդադար վեր առնես, ու երբէք մէջը չածես, շուտով յատակին կը հասնես», ասում է խելՁուկ Ռիքարտը, յետոյ թէ։ «երբ աղբիւրը ցամքում է, այն ժամանակ իմանում են ջրի յարգը»։ Միայն այս բանը պէտք էր նախ իմանալ, խելՁուկ Ռիքարտի տուած խորհուրդը միտ բերելով, որ ասում է։ «եթէ կամենում ես փողի յարգը իմանալ, ինքդ գնա ու փորձիր անձամբ փոխ առնելու։ ով որ գնում է փոխ առնելու, նա ախուր դէմքով է գնում»։ և ճշմարիտ, փոխատուները քաղցր աչքով չեն նայում այն մարդոց վրայ, որոնք միանգամ իրանցից փոխ առնելով, դարձեալ գալիս են փող ուզելու։ Այս բաներս մտածելով՝ խելՁուկ Ռիքարտը ասում է։ «փառաւոր ու թանկագին շորեր ունենալու ցանկութիւնը մի մեծ անէծք է։ այս ցանկութիւնդ կատարելուց առաջ, բայց քսակդ ու մտիկ տուր թէ մէջը բան կայ թէ չէ»։ «Եթէ մի ոսկեղէն կամ արծաթեղէն զարդ գնեցիր, հարկ է որ ուրիշ կահ կարասիքներդ էլ նրա յարմար լինին, որպէս զի տունդ տեղդ միակերպ զարդարուած լինի։ բայց ահա ինչ է

ասում խեղճուկ Ռիքարտը. «աւելի դիւրին է մեզ մեր առաջին ցանկութեանը սանձ դնել, քան թէ նրանից յետոյ եկող ցանկութիւններին բաւականութիւն տալ. և այն աղքատը որ աշխատում է ամէն բանով հարուստին նմանիլ, գորտին արած յիմարութեանը մէջ կընկնի, որ եզի հասակին ու մեծութեանը հասնելու համար այնքան ուռեցաւ, մինչև որ տրաքուեցաւ»: «Մեծ նաւին մեծ ջուր է հարկաւոր, իսկ փոքր նաւակները պէտք է միշտ նաւահանգստին չորս կողմը շուրջդան որ չընկղմին»: Յիմարութիւնը շուտով իր պատիժը ստանում է. «փառայեղ մարդը առատապէս նախաշեկ է անում, աղքատութեամբ ճաշի է նստում և արհամարհանքով իրիկնահաց է ուտում», ինչպէս որ ասում է խեղճուկ Ռիքարտը: Եւ ինչի՞ համար է այս արտաքին անփառութիւնը, ի՞նչ հարկաւոր է այնքան վտանգների մէջ ընկնել, յետոյ էլ այնքան տանջանքներ քաշել: Հաւատացիր, այդ ոչ առողջութեան օգտակար է, ոչ մեր աշխատութիւնը թեթևացնել կարող է, ոչ էլ մարդուս սեպհական արժանաւորութեան վրայ բան է աւելացնում. հապա միայն նախանձը դըգռում է և դժբաղդութիւնը մօտիկացնում:

Իրաւ, ինչ յիմարութիւն է այսպիսի աւելորդ բաների համար պարտքի տակ ընկնել: Զոր օրինակ, այս օրուան ծախուածքով վեց ամիս ժամանակ է արւում դումարը հատուցանելու, և կարելի է թէ այս հանգամանքն է որ մեզանից մէկ քանիսին այս տեղ բերեց, որովհետև մեր ձեռին եղած փողը պահպանել չիմանալով. մենք կամենում ենք շահուել պարտքի տակ ընկնելով: Բայց աւա՜ղ, մտածիր նախ թէ ինչ ես անում սրիշի պարտական մնալով. էլ ինչ, քո աղաստութիւնը օտարի ձեռին ես տալի: Եթէ ժամանակին փողը հատուցանել չկարողանաս, ամօթ կը լինի քեզ մինչև անգամ քո պարտատիրոջ երեսին մտիկ տալ. նրա հետ խօսելիս միշտ ահ ու դողի մէջ կը լինիս, կը ստիպուես անդադար ցածանալ նրանից ներողութիւն խնդրելու ու կամաց կամաց այն աստիճանին կը հասնիս, որ ճշմարտութիւնը ձեռքից կը թողնես և ստութեան ու խաբեբայութեան մէջ կընկնիս. որովհետև «մարդուս առաջին յանցանքը պարտքի տակ ընկնելն է, երկրորդը՝ ստութիւնը ու խաբեբայութիւնը», ինչպէս որ ասում է խեղճուկ Ռիքարտը, յետոյ դարձեալ թէ՝ «ստութիւնը ու խաբեբայութիւնը պարտքի քամակից են գնում». մինչդեռ մարդս, որ ազատ ծնուած է, իրան նման կենդանի մարդու հետ պատահելիս, չպէտք է ամաչի կամ վախենայ: Աղքատութիւնը շատ անգամ մարդուս բարոյապէս ոչնչացնում է. «Դատարկ դոպրակը դժուար թէ ուղիղ կանգնի»: Ի՞նչ կասէիր դու այն թագաւորութեան կամ կառավարութեան, որ մի այսպիսի հրաման հանէր, թէ ով որ հարուստների կամ մեծամարդոց պէս փառաւոր հագնուի, նա բանտի կամ աքսորի կը դատապարտուի: Չէիր տեսնում, թէ դու ազատ մարդ ես, իրաւունք ունիս ուզած շորդ հագնել, թէ մի այսպիսի հրաման քո իրաւունքները ոտի տակ է առնում և թէ այսպիսի կառավարութիւնը բռնաւորական կառավարութիւն է: Եւ սակայն դու ինքդ կամենում ես բռնութեան ձեռին մատնուիլ, պարտքի տակ ընկնելով՝ փառաւոր շորեր ունենալու համար: Քո պարտատէրը քեզ վրայ իշխում է, և իր քէֆին նայելով՝ աղատութիւնը ձեռիցդ խլում է, բոլոր կեանքդ բանտումը նստեցնելով քեզ, եթէ չկարողանաս քո պարտքը հատուցանելու: Երբ դու մի բան ես առնում, փողը վերջը հատուցանելու մտքով, կարելի է շատ քիչ ես մտածում քո տալիքին վրայ. բայց ինչպէս ասում է խեղճուկ Ռիքարտը, «պարտատէրի յիշողութիւնը աւելի սուր է քան թէ պարք ունեցողներինը, պարտատէրները աւելորդապաշտ մարդիկ են, նրանք չեն թողնում երբէք որ նշանակած օրը ու ժամանակը անց կենայ»: Պարք հատուցանելու նշանակած օրը միշտ շուտ է հասնում մեր քամակից և ժամանակ չէ տալի մեզ մեզանից պահանջուած փողը պատրաստել: «Մեծ պասը շատ կարճատև է և բերում այն մարդուն, որ Զատիկին փող պիտի հատուցանէ»: Դու կարելի է կարծում ես, թէ ներկայումս յաջող հանգամանքների մէջ ես գտնվում, ուրեմն և կարող ես փոքր ինչ շռայլ ապրել առանց վնասուելու, բայց «մոռանում ես որ ծերութեան համար հարկաւոր է քեզ պահպանել, քանի որ կարող ես. «առաւօտեան արեգակը ամբողջ օրը մէկ կերպով չէ փայլում: Եկամուտ կարելի է ժամանակաւոր ու պատահական է, բայց ծախքերդ միշտ լինում են, քանի որ ապրում ես: «Աւելի հեշտ բան է երկու վառարան շինել, քան թէ մէկի մէջ անդադար կրակ պահպանել, ասում է խեղճուկ Ռիքարտը, և աւելի լաւ է իրիկնահացը չ'կերած անկողին մտնել, քան թէ պարքդ շինքիդ վեր կենալ»: Վաստակիր որքան կարող ես, և վաստակածդ պահպանիր, ահա այս է այն կախարդական քարը, որ բոլոր քո արծիթը ոսկիի կ'փոխէ: Մինդամ որ այս փիլիսոփայական քարը գտնես, էլ չես գանգատիր վատ ժամանակների կամ տուրքը հատուցանելու դժուարութիւնների վրայ:

Դ. Բայց բոլոր այս բաների մէջ բարեկամնե՛ր, հարկաւոր է խելքով և իմաստութեամբ շարժել: Զափից դուրս մի՛ վստահիք ձեր աշխատասիրութեան, խնայողութեան և խոհեմութեան վերայ, թէպէտ 'ի հարկէ, դրանք շատ գովելի ու գեղեցիկ յատկութիւններ են, բայց բոլոր այդ յատկութիւնները ոչինչ են առանց երկնքի

օրհնութեան։ Ուրեմն խոնարհութեամբ խնդրեցէք այդ օրհնութիւնը և մի փակէք ձեր դուռը այն մարդկանցից, որոնք ձեր աչքին զուրկ են երևում այժմ այդ օրհնութիւնից, այլ մխիթարեցէք ու օգնեցէք նրանց։ Մի՞ներդ բերէք, թէ ցոր նախ ի՞նչ նեղութիւններ է քաշել, բայց յետոյ ի՞նչ երջանկութեան է հասել։

Խօսքս վերջացնելով այս էլ ասեմ. «Փորձը թանկագին ուսումնարան է», ասում է ուրեմն քեզանից փորձառու և շատ բան տեսնող մարդու խորհուրդներին։ «Ով որ ուրիշից խորհուրդ չէ ընդունում, նա օգնութիւն էլ չէ կարող գտնել», ինչպէս որ ասում է խելացուկ Ռիքարը։

Այսպէս վերջացրեց ծերունին իր խօսքը։ Ժողովուրդը լսեց նրա ասածները ու հաւանեցաւ և անմիջապէս յետոյ սկսաւ հակառակը գործել, իբրև թէ ծերունու ասածները սովորական և դատարկ բաներ լինէին։ Ամուրդը սկսվեցաւ և փոքր ինչ առաջ վերևի խրատներին ուշադրութեամբ ականջ անող ժողովուրդը շտապում էր ձեռքէ ձեռք խլելով ամէն բան գնել։

Ես տեսայ որ ծերունին կատարելապէս տեղեակ է իմ «Տարեգրին» և միտն է պահել նրա մէջ պարունակուած բոլոր խրատները, որ քսանըհինգ տարուայ ընթացքում մէկտեղ ժողովել եմ։ Ծերունուն անդադար իմ անունս յիշելը 'ի հարկէ ուրիշներին ձանձրութեան պատճառ եղաւ, բայց իմ անձասիրութիւնը շատ մեծ բաւականութիւն գտաւ, թէ և խոստովանում եմ թէ իմ անունով յիշած խելացի խօսքերի տասներորդ մասն էլ ինձ չէին պատկանում և թէ իմ գլխաւոր աշխատանքը եղաւ անցեալ դարերի ու ժողովուրդների փորձերը 'ի մի ժողովել։ Եւ թէպէտ ես էլ սկզբում կամենում էի նոր շոր կարել տալ, բայց խանութի մօտից անցկացայ, ու միտս գրի հինը էլի փոքր ժամանակ հագնել։ Ընթերցող եթէ դու էլ այսպէս անես, քո երջանկութիւնը մեծ կ'լինի, ինչպէս որ մեծ է իմ երջանկութիւնը։

Ինչպէս միշտ, նոյնպէս և այժմ քո ծառայութեան համար պատրաստ

Ռիքարտ Սամբղերա։

ԳԱԽԿԲՅԻ

Դաբաղ Ղաղոի մասլաաթի կիսատը. (1)

«Բա՞ա լաւ, հիմի ումիկներուս կըտրի՞նք։ Վուր լաւ գահանէք հիմիկվայ ժուղբ չենք պիտի ունենա՞ յ։—Չէ՞, էտենց էլ ումիկ կըտրիլը լաւ չէ. ամէն բան կուլի, թէ կամեցողը կամենայ ու անողն էլ անէ։ Միր խալխի վուրթիքն ուսում չի սորվում։ Հիմի՞—շատ քիչ։ Վուր հեսաբի տակը գըցինք, հարուր էրեխումը շատ շատ թէ էրկու իրիք սորվողը ըլի։ Բա՞ էն մէկէլնիրը՞—էն 98 ու 97-ը մընում չի՞ ուսում, անդիդում ու վադ, իրանց հոր ու մոր օրինակի։ Յիդն էլ ուփրօ վադանում չի՞, մախրախի գըդալնիրն աւելցնում չի՞, փրչանում չի՞, էնդու համա վուր քաղաքներուս յիդնու յիդը փրչանում է, խարաբ է ըլում։ Վադ բանիրը սորվում է միր խալխը, ու էն վադ բաներու յիդ լաւիրն էլ վուր կայ, էնդունց սորվիլը վուր չի պիտի, վո՞ւրդանց կու սորվի։ Խալխը հիմի լաւնում է՞—շատ քիչ, խիստ ծանդըր։ Միր գահանէքն էլ ինչորի դիփունի լաւնալը, գիդնաւոր գառնալը, էնէնց պիտին մընայ, վունցոր հիմի ի՞նչ։—էտ էլ չի ըլի։ Թէ ինձ կու հարցընին, իս կասիմ, վուր թող խալխն էլ լաւնայ ու նրանց յիդ միր գահանէքն էլ լաւնան։ Էտէնցով գահանէքը ջիվդան խօմ չին լաւնայ, էլի էն անհեսաբ վադ վադ բանիրը, վուրնոր խալխն է անում, նրանք էլ քիչ թէ շատ կունենան։ Էլի ի՞նչորը գուպէ ըլի, մէ ծիծ ինք կերի, մէ օրորոցումն ինք օրըրվի, մէ հանդի ինք մինձայի պըսաբկուց, նրանք էլ միդ պէս կուլին։ Ամա իփոր գահանացուն 10, 12 տարի սորվելումն ըլի, ուսումի էգնէն ըլի ման գալի գիշեր ցերեկ—թէ խիստ մէ բաշ չէ, քիչ քիչ խօմ կու լաւնայ։ Էս տարի մէ 10 օրինաւոր գահանայ կու բահամ գայ, մէկէլ տարի վուր կու տեհնին, թէ ղուրթ լաւ բան է էլի լաւ գահանէն, 20-ը կեհայ սորվելու, իժում էլի աւելի ու էհէնցով կեհայ ու բան կու դառնայ։

Իմ խիլքումն էլ կի նըստեցաւ իմ վուրթու ասածնիրը։ Մարթ հոքով պիտի ասէ, վուր իս էս չուրս, հինգ տարի առաջ էսէնց չուստ չէի վրայ նընգնի բանին, վունցոր հիմի։ Ղուրթ վուր ամէն բանն էլ սովորուտկ է էլի, լաւ բանն էլ ու վադն էլ։։

Իժում էլի էրգար ու մէկ խօսեցաւ վուրթիս, թէ մեզ կօսէ, ուսումարանիր է հարկաւոր թէ տըղերանց ու ախջկերանց համա, թէ աշխարականներու ու թէ տէրտէրացու ու վարթապիտացու մարթկերանց համա։ Շատ էրգար խօսեցաւ։ Իս էլ հեստի թահարն անգամ էի անում նրան, վուր քէփը գալիս էր, խսկի չէր ուզում խսսվածկութինը կըտրի։ Կու աւտաք, մոդ իրիք չուրս տահաթ հենց էստունց վրայ էր խօսում։ Շնորհակալիմ վուրթուսմէն, Աստուծ նրան աւելի խիլք ու շնորք տայ։

Իմ վուրթու ասածնիրը դիփ միանայ միտս ունիմ, մանինց ասի էսօր էքուց էլ շատ բան չունիմ, քանի մըտէս չէ նընգի, արի՞ ու դիփ մէտի կու նըստիմ ու կու գըրիմ։ Ինչոր գըրում իմ հիմի, դիփ իմ վուրթու ասածնիրն է։

---

(1) Էս դաղէթի վրայ 36 ու 37 նումըրներումն էլ է տըպած։

Ինչեմ՞ն է վուր միր գահանէքը շատ պակասութիւն ունին, —էնդումն է, վուր գիդնաւորութիւն չունին, չին սորվի իրանց հարկաւոր բանիրն ու համ էլ շատ խիստ ճարիկը, նրանց տարուստ ճարիկը շատ անկարգ է ու անկանոն: Ի՞նչ ինք տրվի, վուր ի՞նչ ուզինք դըբանցմէն: Ասում ին, թէ միր տէրտէրիրը շատ պարտաւոր ին միզ: Լաւ: Մէ մարթ էն վախտն է քու պարտականն գառնում, իփոր նրան փուղ իս փուլս տալի, փուղը տըվէր, նա քու պարտականն է: Միր գահաներուն ի՞նչ ինք տրվի, վուր ի՞նչ ըլին միզ պարտական, իփոր մինք ուսում կու տալ տանք դըբանց, միր տըվածը էն էն կուլի: Ուսում վուր կուննան, էն վախտը կու իմանան թէ իրանք պարտկ ունին ու կու գիդենան պարտկը վըջարելու ճամփէքը, թէ չէ ու մէ մարթ վուր իսկի խաբարութիւն էլ չունենայ իր պարտկէմէն, նրամէն ի՞նչ ուզես, ի՞նչ կու գուս բերիս նըրամէն: Ի՞նչ ին մոդ արի իրանց գրելսումը, վուր ի՞նչ բաժնին միզ: Դիփուն դըբանց անբաղդ արարմունքնիրը, ինչոր անում ին հիմի, ուսում չունենալէմէն է, չըսորվելէմէն է: Օ՛հ, ուսումի վրայ վուր խօսկ է բաց անում իմ վուրթին, կասիս թէ դիփ կրակ է վէր ածում: Ուսումը, կասէ, հեստի բան է, վուր վունցոր մուրթը օթախումը վունչինչ չըլինք տեսնում ու մեր աշ մէ մում տուն տանին էնդի, լուս տայ, ամէն բանն էլ երևվայ, թէ ինչն ի՞նչ տիղ է դըրած ու ինչն ի՞նչ տիղ, էնէնց էլ ուսումն է միզ համա: Էս աշխարքումը, կասէ, թէ անուսում ինք, դրուստ քու ի պես ինք, վունցոր մուրթը օթախումը վունչինչ չինք տեսնում, աճկենիրուս բաց է, ամա ի՞նչ գուզիս անի, էնէնց չէ տեհնում ամէն բանը, վունցոր պիտի: Ուսումն էն մըմի պէս բաց է անում միր աճկիրն ու կասիս թէ իժում է աճկենիրումը լուս գալի: Ուսումը մարթուն ամէն բանով լաղաթն է դըրում: մարթուս շինում է օրինաւոր, կատարեալ մարթ: Իփոր ուսում ունէ մարթ, իր լաւն ու վադն էլ կու կանենայ. Ջուդի, իր գըլխի ղադրն էլ կու գիդենայ, իր Աստուն էլ իր հօրն ու մորն էլ ու դիփունինը: Էնդու համա էլ ասիլ ին. խելքնիրը, թէ, կասէ, վուրթուտ համա տուն ու տիղ ու մինձ կանանք մի՛ թողնի,—ուսում թողը կասէ, ուսում տալ տուս նըրան, քանի էլ կենդան իս աշխարքի վրայ: Իփոր մարթու գըլխումը կայ, նա քախացած չի մընայ, ծուցն էլ լիքը կունենայ ու ջիրն էլ: Մի՛ր տէրտէրնիրը կի՛, հոքու տակը պիտի ասէ մարթ, միզ չունին էտումը, վուր էտէնց ին: Օ՞ղ է սորվեցրի դըբանց մէ օրինաւոր իմքին, վո՞ւր շիտերումն ին խելք մոդ արի, վուր լաւ գիդենան իրանց անկուբանն ու կանենան տեսնի իրանց անկարը արարմունքնիրը: Իրանք խամ չին տեսնում ու ուրիշն էլ վուր մատով շանց է տալի, էլի չին ուզում տեսնի,—էտ անդիդումութէնի նըշան է: Գիդնաւոր մարթն օչովեմէն չի ամանչի, վուր բան սորվի, թէ մինձէմէն ու թէ պըստրկէմէն, ամէն բանեմէն ու դիփունեմէն նա խիլք դուզէ սորվի: Էն ուսում չէ՛, էն գիդումութիւն չէ, վուր հիմի միր մէ քանի գահանէքն ունին, կասէ, շատ քիչ ին, վուր գիդնաւորութենեմէն մէ պըստի փաի ունին, շատ քըչով ի՞նչ կու գառնայ: Սաւաի քըչութինը միր գահանէքը, մէկը վո՞ւրդի է սորվի, մէկը վո՞ւրդի, մէկը ո՞ւմ մոդ է աշկերտութիւն արի, մէկէլն ո՞ւմ մոդ: Միր գահաներու թահար թահար գիդեցածն էլ ջիղդան կորչում է, իփոր մէ բանի ին կըփչում, մէկն էսէնց է անում, մէկէլը ջըլիս ուրիշէ ասում, մէկը գէսն է քաշում, մէկէլը գէնն ու ամէն բանը մընում է մէջ տիղը կիսակատար: Մէկը վուր ուզում է պըստի տըղերանց ու ախչըկերանց համա շիտլա բաց անէ, մէկէլնիրուն խիստ ջիգրն է գալի, վո՞ւնց կուլի, կասէ, գահանէն ախչըկերանցն, ի՞նչ կարք է. վուր դաս տայ: Քանի կանենում դէսն ին նըստնում, դէնն ին նըստնում, էնդեղայ անում ին, վուր բանը խառնում ին ու իժում հիռուէմէն թամաշա ին անում,—էտ կի տէրտէրի լաիղ բան է՞... Խալխի մոդ իրանց գլուխը դըրստելու համա, չաւ ին անում իժում, թէ վլան տէրտէրը, կասէ, լաթանդ է, ցարմասոն է: Ինչոր իրանց գիդեցածեմէն աւելի է, թէգուզ լաւ բան ըլի, թէգուզ վադ, գիփ մէտի լաթանդութիւն է նրանց համա: Մինձ մինձ լաւ ուսումարաններիր պիտի, վուր նրանք կարքի նընդնին ու օրինաւոր գահանէք դառնան միզ համա:

(Չէր էլի կայ):

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ·

Քանիցս անգամ պատիւ ունեցանք խօսելու Բէթղեհէմի սուրբ Աստուածածնայ եկեղեցու մօտ բացվելու օրիորդաց դպրոցի մասին, որոնք այսքան ժամանակ զանազան անձանց հակառակութեամբ ուշանում էր: Ահա այժմ բաղդաւոր ենք համարում մեզ կարողանալով յայտնել, որ նոյն դպրոցի բացումն լինելու է կարծեօք էգուց ամսոյս 10-ին կիրակի օրը և ով որ կ՚բարեհաճի կարող է ներկայ գտնվել յիշեալ դպրոցի օրհնութեանը: Յանկանում ենք յաջողութիւն այս նորահիմն դպրոցին. Աստուած տայ, որ կարողանայ տալ ազգին իր արդիւնաւոր պտուղները:

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ (Ի ՏՊԱՐԱՆԻ Գ. ԱԵԼԵՔՈՒՄԵԱՆ
Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ· (Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ;

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 9 ноября 1863 г.
ТИФЛИСЪ